26270

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԱՊՊ 37

Ք. Երևան

14.12.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության ղեկավար Սամվել Գևորգյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշումներ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի N 2099-Ա/2 և 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 2340-Ա/2 հրամանները՝ «Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան և գինը**

1.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն Պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, Կազմակերպությանը հատկացնել 1,426.8 հազ. (մեկ միլիոն չորս հարյուր քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումներով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի

Հավելված N 1-ում, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը՝ Հավելված N 5-ում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված Միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին 7.4 կետով սահմանված ժամկետում, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

**3. Մոնիթորինգը**

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

**4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը**

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կկազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարը Կազմակերպությանն է հատկացվում Պայմանագրի կնքումից հետո՝ համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված N 3):

5.2. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. .Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կատարողին վճարվելիք գումարներից:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի նոյեմբերի 14-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

7.3. Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.4. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության Պետական մարմնի կողմից սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածներով հաստատվում են, համապատասխանաբար, Ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը, հանձնման-ընդունման ակտը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պետական մարմինը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել ի

մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինը այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Բի էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ |
| Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2 | 0002, ք. Երևան, Եկմալյան 6, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Բիզնես Պալե» կենտրոն |
| Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Գլխավոր քարտուղար՝ | Հ/Հ 1570005343780100 ՀՎՀՀ 00930412 |
| Գագիկ Սաֆարյան | Կազմակերպության ղեկավար՝ |
| /ստորագրություն/ | Սամվել Գևորգյան |
| Կ.Տ. | ստորագրություն |
| | Կ.Տ. |

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի 14-ին
կնքված N ԱՊՖ 37 պայմանագրի

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում» ծրագրի

| N /կ | Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | նկարագիրը | կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | միջոցառման իրականացման վերջնաժամկետը | հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| | Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում | Հետազոտության արդյունքների հիման վրա երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում | -Հետազոտության իրականացում<br>-Ուղեցույցի մշակում | Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույց | 20.12.2022թ. | Իրականացված գործողությունների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն | 1.189.000 |
| | Ընդամենը | | | | | | 1.189.000 |
| | ԱԱՀ | | | | | | 237.800 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 1.426.800 |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ.
02698732

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100, ՀՎՀՀ 00930412
Կազմակերպության ղեկավար՝
Սամվել Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
2022թ. դեկտեմբերի 14-ին
կնքված N 2-ՊՇ 37 պայմանագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
Ծրագրի «Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում»
Ծրագրի տևողություն 14/11/2022-20/12/2022

| Հ/Հ | Բյուջեի տողի նկարագրական | Միավոր | Միավորի քանակ | Միավորի արժեք (ՀՀ դրամ) | Պահանջվող գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | **Աշխատավարձ** (այդ թվում հարկերը) | | | | |
| Ա | | | | | |
| 1.1 | Խորհրդատու | մարդ | 2 | 132.000 | 264.000 |
| 1.2 | Հետազոտող | մարդ | 1 | 150.000 | 150.000 |
| 1.3 | Վերլուծաբան | մարդ | 1 | 150.000 | 150.000 |
| 1.4 | Փորձագետ | մարդ | 2 | 130.000 | 260.000 |
| 1.5 | Հարցումներ անցկացնող մասնագետ /250 հարցում x 500դրամ/ | մարդ | 1 | 125.000 | 125.000 |
| 1.6 | Խորքային հարցազրույցներ անցկացնող մասնագետ /16 հարցազրույց x 15.000 դրամ/ | մարդ | 1 | 240.000 | 240.000 |
| **Ընդամենը Ա** | | | | | **1.189.000** |
| **ԱԱՀ** | | | | | **237.800** |
| **Ընդամենը** | | | | | **1.426.800** |

*ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6, «Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100 ՀՎՀՀ 00930412
Կազմակերպության ղեկավար՝ Սամվել Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 3
2022թ. [illegible] 19-ին
կնքված N [illegible] պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

**Կազմակերպության անվանումը՝** «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ-ն

| «1115. Երիտասարդության ծրագիր» «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» «Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցի մշակում» ծրագրի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը | Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | հուն վար | փետր վար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| «ԵՔ-ԴՄ-ԵՄՈՒ 04/22» | 99999999/ | – | – | – | – | – | – | – | – | – | – | – | 1,426.8 | 1,426.8 |


ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎ 900011032878
ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎ 1570005343780100
ՀԿՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
Ս. Գևորգյան
Կ. Տ.

Հավելված N 4
2022 թ. [illegible]-ին
կնքված N [illegible] պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պետական մարմին

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

# ԱԿՏ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

| N | Իրականացված միջոցառման | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | գործառույթի համառոտ նկարագիրը | արդյունքը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/ |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N5
2022 թ. դեկտեմբերի 14-ին
կնքված N ԿԳ 37 պայմանագրի

# «Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում» ծրագիր

## Համառոտագիր

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված «Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակման» դրամաշնորհի հատկացման մրցույթի իրականացման շրջանակներում «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից նախատեսվում է իրականացնել երիտասարդական միջավայրերի ստեղծման համար նախատեսված ուղեցույցի մշակում: Աշխատանքի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել առաջնային և երկրորդային աղբյուրներից հավաքագրված տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն՝ դեմառդեմ հարցազրույցների, օնլայն հարցումների, ինչպես նաև միջազգային փորձի և առկա տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

Ուղեցույցը իր մեջ կներառի համայնքային մակարդակներում մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման միջավայրի նկարագիր, որտեղ երիտասարդները, և նրանց միջոցով այլ տարիքային խմբերը, կունենան առավելագույն հնարավորություններ վայելելու որակյալ ժամանց, բացահայտելու և զարգացնելու իրենց կարողությունները, շարունակաբար զարգանալու և ստեղծագործելու, ինչպես նաև իրենց ներդրումն ունենալու համայնքի զարգացման գործում: Արդյունքում երիտասարդները կզինվեն համապատասխան գիտելիքներով և հմտություններով, կհամախմբվեն միասնական որոշումներ կայացնելու գաղափարների շուրջ և առավել արդյունավետ կդարձնեն իրենց գործունեությունը:

## Ծրագրի նկարագրություն

Յուրաքանչյուր երկրում երիտասարդները զարգացման և բարգավաճման կարևորագույն խթանն են: Ծրագրի նպատակն է մշակել Հայաստանի Հանրապետության համայնքներում երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույց: Ուղեցույցը կխթանի մրցունակ ու աշխույժ մարզաբնակ երիտասարդական համայնքներ ձևավորելուն:

Ուղեցույցը կանդրադառնա երիտասարդների կարողությունների զարգացմանը, որակյալ ժամանցի ներդրմանը, երիտասարդական համայնքների, մարզերի զարգացման գործընթացների իրականացմանը, կնպաստի երիտասարդների սահուն ինտեգրմանը աշխատանքային շուկա՝ որպես մրցունակ աշխատուժ:

Մշակված ուղեցույցը իր մեջ կներառի քանակական և որակական տվյալների վերլուծության արդյունքում դուրս բերված տեղեկատվություն: Ուղեցույց կուղղորդի մարզաբնակ երիտասարդների համար երիտասարդական միջավայրի ստեղծմանը և արդյունքում երիտասարդները կկարողանան լուծել իրենց

դեմ ծառացած մի շարք խնդիրներ, կընձեռի հնարավորություն ռեալիզացնելու ստեղծված գաղափարները, ինքնաբացահայտվելու և ազատ ստեղծագործելու՝ կազմակերպելով մշակութային միջոցառումներ, կամավորական աշխատանքներ և այլ գործողություններ, որը կխթանի համայնքի զարգացմանը:

## Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

«Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակման» ծրագրի նպատակն է մշակել երիտասարդական միջավայր ստեղծելու Ուղեցույց, որը կլինի մարզաբնակ երիտասարդներին ուղղված քաղաքականության իրականացման գործիք: Ուղեցույցի գործարկման պարագայում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

- մարզաբնակ երիտասարդների կարողությունների և հնարավորությունների բացահայտում, հետագա զարգացում
- ինտելեկտուալ ժամանցի կազմակերպում
- աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ աշխատուժի ձևավորում
- ստեղծագործելու և խմբային աշխատանքների իրականացման հնարավորությունների ստեղծում
- ինքնակազմակերպվելու, որոշումների ընդունման կարողությունների զարգացում
- թեմատիկ քննարկումների, սեմինարների, դասընթացների, սպորտային և մշակութային միջոցառումների իրականացման ուղղություններ
- փափուկ հմտությունների զարգացում:

«Բի Էս Սի»-ն պատրաստ է ներդնել իր փորձը Ուղեցույցի արդյունավետ մշակման համար:

## Գործողություններ

Ծրագրի շրջանակներում առաջարկվում է իրականացնել հետևյալ հիմնական գործողությունները՝

*I. Ծրագրի մեկնարկ, պլանավորում, առկա տվյալների ուսումնասիրություն.*

Այս փուլի շրջանակներում կիրականացվի գործողությունների մանրամասն պլանավորում , որը կքննարկվի և կհամաձայնեցվի ԿԳՄՍՆ ծրագրային թիմի հետ: Համապատասխանաբար, «Բի Էս Սի»-ի մասնագետների կողմից կմշակվի գործողությունների պլանը և ժամանակացույցը, ծրագրի իրականացման

մեթոդաբանությունը, վերջնական արդյունքները, ուղեցույցի կառուցվածքը և այլն: Ունենալով նմանատիպ ծրագրերի իրականացման և ուղեցույցների, տարբեր ոլորտային գրականության մշակման փորձ՝ «Բի Էս Սի»-ն ունի անհրաժեշտ փորձն ու գիտելիքները բացահայտելու թիրախավորված հանրության առանձնահատկությունները, կարիքները, մարտահրավերները և մշակելու կարիքների լուծմանն ուղղված ուղեցույց:

2. *Ծրագրի իրականացման մեթոդոլոգիայի մշակում.*

Ծրագրի սահմանված նպատակներին հասնելու համար կմշակվի ծրագրի մեթոդոլոգիան, որն իրենից կներկայացնի տարբեր գործիքների և մեթոդների կիրառություն՝ անհրաժեշտ տվյալները հավաքագրելու, վերլուծություն իրականացնելու և ուղեցույցի մշակման համար: Տվյալների հավաքագրումը կիրականացվի և առաջնային, և երկրորդային աղբյուրներից: Իրականացվելու քանակական և որակական տվյալների վերլուծություն:

Առաջին փուլում տվյալները կհավաքագրվեն **երկրորդային աղբյուրներից**՝

- ԿԳՄՄՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն,
- Համայնքներից, մարզպետարաններից հավաքագրված տեղեկատվություն,
- Նմանատիպ ուսումնասիրություններ, հետազոտություններ, ծրագրային հաշվետվություններ, հրապարակումներ,
- ՀԿ-ների, հիմնադրամների կողմից տրամադրված տեղեկտավություն (տվյալներ կհավաքագրվի այն ՀԿ-ներից և հիմնադրամներից, որոնք իրականացրել երիտասարդական ծրագրեր և ունեն համապատասխան փորձառություն),
- Միջազգային փորձի ուսումնասիրություն

**Առաջնային աղբյուրներից** տվյալների հավաքագրումը կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

- 16 խորքային հարցազրույցներ
- Նվազագույնը 250 հարցում

Հարցումները առաջարկվում են իրականացնել օնլայն հարթակների միջոցով:

Վերը նշված աղբյուրներից հավաքագրված տեղեկատվությունը կմուտքագրվի և կմիավորվի համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով՝ վերլուծության և հետագա մշակման նպատակով:

3. *Տվյալների հավաքագրում և վերլուծություն*

Սկզբնական փուլում «Բի Էս Սի»-ի մասնագետները կիրականացնեն երկրորդային տվյալների հավաքագրում, որը հնարավորություն կտա վերհանել բացերը, խոչընդոտները, հնարավորությունները, մարզաբնակ երիտասարդների կարիքները, առկա մարտահրավերները և այլն: Երկրորդային տվյալների նախնական աղբյուրները ներկայացված են նախորդ փուլում, որը ենթակա է քննարկման ԿԳՄՄՆ ծրագրային թիմի հետ հաստատման նպատակով:

**Առաջնային** տվյալների հավաքագրումը կիրականացվի հետևյալ աղբյուրներից՝

- 16 խորքային հարցազրույցներ
  - Համայնքապետարաններում երիտասարդների գծով աշխատող մասնագետներ
  - Ոլորտային էքսպերտներ
  - ՀԿ-ների, հիմնադրամների և այլ համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներ

- Նվազագույնը 250 հարցում
  - Հարցումները կիրականացվեն մարզաբնակ երիտասարդների հետ

Սկզբնական փուլում իրականացված երկրորդային հետազոտության հիման վրա կմշակվի հարցման հարցաթերթը, որը կհամաձայնեցվի ԿԳՄՍՆ ծրագրային թիմի հետ:

Առաջնային և երկրորդային աղբյուրներից հավաքագրված տեղեկատվությունը կմուտքագրվի վերլուծության նպատակով: Հետազոտության արդյունքում դուրսբերված տվյալների օգնությամբ «Բի Էս Սի»-ի մասնագետների կողմից կմշակվի Ուղեցույցը:*Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում.*

Երիտասարդական միջավայրերի գործունեության Ուղեցույցը կմշակվի հիմնվելով հետազոտության արդյունքների վրա: Ուղեցույցը կլինի հստակ և հասկանալիորեն կազմված, կսահմանի երիտասարդական աշխատանքը, գործունեության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները: Արդյունքում՝ Ուղեցույցը կլինի կազմված քանակական և որակական տվյալների վերլուծության հիման վրա և հետևաբար կներառի համայնքների և երիտասարդների կարիքներից ծագած առաջնահերթությունները:

«Բի Էս Սի»-ն պատրաստ է ներդնելու իր փորձն ծրագրի իրականացման գործում, որը կխթանի երիտասարդների և համայնքների կյանքի որակի բարձրացմանը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

*Կազմակերպություն* *«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ*

*Ծրագիր* *«Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում»*

*Ժամանակահատված* *Նոյեմբերի 14 – Դեկտեմբերի 20, 2022 թ.*

| ՀՀ | Գործողություն | Պատասխանատու | Շաբաթ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Պայմանագրի կնքում | BSC | | | | | | |
| 2 | Մեկնարկային հանդիպում ՀՀ ԿԳՄՍՆ ծրագրի թիմի հետ՝ առաջադրանքը վերանայելու, հիմնական գործողությունները հաստատելու համար | BSC | | | | | | |
| 3 | Աշխատանքի մանրամասն պլանավորում, մեթոդոլոգիայի մշակում | BSC | | | | | | |
| 4 | Երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրում և վերլուծություն | BSC | | | | | | |
| 5 | Հարցազրույցների իրականացում | BSC | | | | | | |
| 6 | Հարցումների իրականացում | BSC | | | | | | |
| 7 | Տվյալների վերլուծություն | BSC | | | | | | |
| 8 | Երիտասարդական միջավայրերի գործունեության ուղեցույցի մշակում | BSC | | | | | | 20.12. |

## Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագիրը շահառու են հանդիսանում 16-35 տարեկան մարզաբնակ երիտասարդներ:

Ծրագրի շահագրգիռ կողմերն են՝ ՀՀ ԿԳՄՍՆ, Հայաստանի տարբեր համայնքներ (միջբնակավայրային խմբավորումներ, միջհամայնքներ) և այլն:

## Ռիսկերի գնահատում

Տվյալների հավաքագրման ռիսկեր: Հետազոտության իրականացման շրջանակներում հնարավոր է առաջանան հարցվողների ներկայացուցչական քանակի ապահովման խնդիր: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ «Բի Էս Սի»-ն ունի հարուստ փորձ իրականացնելու մեծ հետազոտական աշխատանքներ և կներդնի իր փորձն ու հնարավորությունները ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Ֆորս մաժորային իրավիճակներ. Ուղեցույցի մշակման ընթացքում BSC-ն ուշադրություն կդարձնի նաև հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակներին և կգործի ըստ իրավիճակի: Ռիսկերի չեզոքացման, ընդունման և հաղթահարման համար արագ արձագանքման մեխանիզմներ կմշակվեն:

Կամայական այլ ռիսկերի ի հայտ գալու պարագայում BSC-ն կիրականացնի նախապես պլանավորված գործողություններ՝ դրանք ժամանակին չեզոքացնելու համար:

## Ծրագրի աշխատակազմը

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագում | Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը |
|---|---|---|---|
| 1. | **Սամվել Գևորգյան** | Խորհրդատու | Սամվել Գեւորգյանը կառավարման խորհրդատվության և ձեռներեցության որակավորված մասնագետ է՝ 28 տարվա փորձով: Նա «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի բիզնես խորհրդատվական և թրեյնինգային ընկերության տնօրենն է: Ծրագրում ներգրավված է լինելու որպես խորհրդատու: |
| 2. | **Աննա Գևորգյան** | Խորհրդատու/ հետազոտող | Աննա Գևորգյանը ունի ավելի քան 7 տարվա մասնագիտական փորձ և ներգրավված է եղել բազում նախագծերում՝ որպես ծրագրի ղեկավար, համակարգող, խորհրդատու, վերլուծաբան, հետազոտող և սոցիալական հարցումների փորձագետ: Ծրագրում ներգրավված է լինելու որպես խորհրդատու: |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Հեղինե Շահինյան | Հետազոտող | Հեղինե Շահինյան ունի ավելի քան 6 տարվա մասնագիտական փորձառություն: Ծրագրում ներգրավված է լինելու որպես հետազոտող: |
| 4. | Մովսես Ալեքսանյան | Վերլուծաբան | Մովսես Ալեքսանյանը ունի ավելի քան 25 տարվա աշխատանքային փորձառություն, իրականացրել է բազմաթիվ մեծածավալ վերլուծական աշխատանքներ: Ծրագրում ներգրավված է լինելու որպես վերլուծաբան: |
| 5. | Մարիաննա Ավետիսյան | Փորձագետ | Մարիաննա Ավետիսյանը ոլորտում բարձր որակավորում ստացած և փորձառու մասնագետ է, ունի ավելի քան 6 տարվա մասնագիտական փորձառություն: Ծրագրում ներգրավված է լինելու որպես փորձագետ: |
| 6. | Արփինե Դալլաքյան | Փորձագետ | Արփինե Դալլաքյանը ունի ավելի քան 11 տարվա մասնագիտական փորձառություն, ներգրավված է եղել բազում ծրագրերում որպես ղեկավար, փորձագետ, համակարգող: Ծրագրում ներգրավված է լինելու որպես փորձագետ: |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարություն

Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ

ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,

«Բիզնես Պալե» կենտրոն

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570005343780100 ,ՀՎՀՀ 00930412

Կազմակերպության ղեկավար՝

Սամվել Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.